ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵ

«13» 01 2020թ.

ՀՐԱՄԱՆ N 5-Հ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 453-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի «զ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2019 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 453-Ա հրամանում կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ. «3. Ընկերության կողմից իրականացվող՝ IATA ձմեռային ժամանակահատվածում 2020 թվականի հունվարի 14-ից մինչև 2020 թվականի մարտի 24-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Կրասնոդար/URKK/-Երևան/UDYZ/-Կալուգա/UUBC/-Երևան/UDYZ/-Կրասնոդար /URKK/ երթուղու Երևան/UDYZ/-Կալուգա/UUBC/ ուղղությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով սահմանված չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին, և հետևաբար նշված ուղղությամբ մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «զ» ենթակետով սահմանված արտոնությունը: Հաշվի առնելով վերոգրյալը

Երևան/UDYZ/- Կալուգա/UUBC/ ուղղության համար արտոնության տրամադրման սկիզբ սահմանել 2020 թվականի հունվարի 14-ը՝ 36 ամսով: IATA ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ ավիաընկերության ներկայացվող հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:»

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

1/13/2020

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926